

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Մանկութիւն. (մանուկների համար). Հայ մայրերի և իրանց փոքր մանուկ օգտին. Յօրինեց Ջաք. Գրիգորեանց. Թ. Տպ. Մ. Շարաձէի և ընկ. 1895:

Բացատրական ձեռնարկ «Մանկութիւն» կոչուած պատկերազարդ գրքոյկի. Աշխատասիրեց Ջաք. Գրիգորեանց. Թ. Տպ. Մ. Շարաձէի և ընկ. 1895:

Պ. Ջ. Գրիգորեանցը մի գեղեցիկ միտք է յղացել — տալ Հայ մայրերի ձեռքը մի օգտակար զուարճալիք իրենց փոքրահասակ զաւակներին զբաղեցնելու համար. Մանկավարժական տեսակէտից հարկաւ խիստ օգտուէտ և միանգամայն զբաղեցուցիչ մի միջոց է պատկերը, որ կարող է բազմաթիւն գրուցատրութեան և բացատրութեանց նիւթ դառնալ և այդ օժանդակ միջոցը վաղուց ընդհանրացած է քաղաքակիրթ ազգերի և ընտանիքների մէջ. Վերջին օրերս լրագիրներից իմացանք որ Քիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը լոյս է ընծայել Հայ մանուկների համար մի պատկերազարդ 1000 հայերէն, վրացերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով, Ի հարկէ Հրատ. Ընկ. ձեռնարկութիւնը շատ համակիր չէ, բայց նոյն լրագիրների նկատողութիւններից երևում է որ նոցա ծանօթ չէ Հրատ. Ընկ. հրատարակութեան նման մի այլ գործ, որ 1888 թ. լոյս է տեսած Մոսկուայում Օ. Հերրեկի տպարանից, Մեր իօքըր Պ. Գ. Տարասնկովի կազմած «Անդամաբանական լօտոյի» մասին է, որ կազմած է ռուսերէն, ֆրանսերէն, ֆայերէն, գերմաներէն, անգլիերէն և պարսկերէն լեզուներով. պատկերները գունաւոր են և շատ յայտն. թերութիւններ կարելի է ցոյց տալ կենդանիների անուանց հայերէն թարգմանութեան մէջ:

Պ. Գրիգորեանցի «Մանկութիւնը» մանկական կեանքի պատմութիւնն է պատկերներով ոչնչացած մանկան ծննդեան օրից. բոլոր պատկերների թիւը 28 է, բոլորը միագոյն սև և բոլորովին անյաշող նկարուած ու տպուած. Արուեստի բացակայութեան հետ միասին այդ տեղ աչքի է ընկնում մի այլ թերութիւն. Պ. Գրիգորեանցը կամենալով ֆայմական ծանօթ պատկերներ տալ կնոջ նկարը յառաջ է բերում վրացե զգեստով, Ակաֆայ մարդ կամենում է հարցնել ինչո՞ւ ոչ թուրք:

Բայց Պ. Գրիգորեանցի «Բացատր. ձեռնարկից» մենք կարողանում ենք եզրակայնել որ այդ հրատարակութիւնն աչքի առաջ է ունեցել թերևս Քիֆլիսի կամ առ հասարակ Վրաստանի «մանկահաս» (?) ծնողներին և անփորձ դաստիարակներին. մեզ վրայ այդ պաւտրութիւնն է անուճ այն խժդժական բարբառը, որով գրուած է «Ձեռնարկը և որ հայերէն լեզու է կոչուում, Հ. մի ձեռքում ի՞նչ ունի ընծած, միւս ձեռքում ի՞նչ». Պ. «Մի ձեռքում (ձեռքով) է կամենում ասել) օրօրոցն է բռնել» և ըն. «Մեծ քոյրը ոտքերը ի՞նչպէս ունի դրած»: «Երբ մանուկները այդպէս տեղաւորուում են, այն մտանակ կանգնանքից մէկը կը կողքելով հրում է

բուքնի է սալիս. ապա մի փոքր անցնելուց՝ միւս կանգնածն է բուքնի տալիս» . . . Ի սէր Աստուծոյ, միթէ այս լեզուով գրողն իրաւունք ունի խօսելու լեզուի մասին և պահանջելու որ իւր «Ձեռնարկով» մայրերը սովորեցնեն իրենց երեխաներին «ասած բառերը նորով և որոշ արտասանելու և կանոնաւոր կարճ նախադասութիւններով կրկնելու»:

Բացի յիշեալ ոճով գրուած բացատրութիւններից՝ Պ. Գրիգորեանցը, «որպէս զի մի և նոյն առարկայի կամ երևոյթների տպաւորութիւնները փոքր ինչ երկարասաւ ու աւելի խորը թափանցեն մանուկների մտքի և սրտի մէջ», բոլոր 28 պատկերների բովանդակութիւնը «մի ուրիշ ձևով մի ուրիշ կերպով» կրկնել տալու համար յօրինել է առանձին առանձին ոտանատըներ, որ առաջարկում է մայրերին երգել (?) «մի որ և իցէ երգի եղանակով»: Ձեռք կարող զրկել մեր ընթերցողներին այդ ոտանատըներից գէթ մի երկուսը կարդալու հաճոյքից:

Ա. պատկեր. (կէտադրութիւնն և ուղղադրութիւնն անփոփոխ ենք թողնում):

- Այս օրօրոց է
- Մանուկի համար.
- Փափուկ անկողին
- Վրէն կրգցեն.
- Մանուկին մէջը՝
- Տաք և փափուկ.
- Կըքնացնեն.

Գ. պատկեր. . . . Իւր խաղտիկները ձեռքին՝

- Օրօրոցը միւս ձեռքով
- Օրօրում է նա մանուկին.
- Մեղմ ու քաղցր տալով ձայնին.
- Սիրուն եղբայրիկ
- Աչքդ խփիր
- Եւ անուշ քնիր.

Թ. պատկեր. Մանուկը նոր չոչ է անում:

- Ոտքով ման դալ չէ կարանում.
- Ձեռներն էլ նրան են օգնում
- Եւ այդպիսով տեղափոխուում.

Սակայն պէտք է յիշենք որ Պ. Գրիգորեանցը համեստաբար ուղուած է հասկացնել որ ինքը ոտանաւոր գրող չէ, թէպէտ մենք էլ խոստովանում ենք որ չենք հասկանում, թէ ինչ են նշանակում հետևեալ տողերը. «Մնում է ասել որ ոտանաւորները, յոկ ոտանաւորներ են և մենք երբեմն (?) համակրութիւն (?) երեւի յաւանտութիւն) չենք ունեցած կարծելու թէ ոտանաւորներ գտնու ընդունակութիւն ունենալ»: Պ Գրիգորեանցի «Ձեռնարկի» վերջում գետեղուած են պ. Բ. Մինէձեանի «Մանկանց բժիշկը» գրքից առնուած մի քանի իրատներ մանկատաճութեան վերաբերեալ որոնց արժէքը գնահատելը թողնում ենք բժիշկներին. թող նորա ասեն թէ ո՞րքան բարի խրատ է նորատի մայրերին, այն պատուէրը՝ թէ իրենց մի քանի ամսական երեխայոց համար «կաթը երբէք չպէտք է եփել»: